[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
6	Սեպտեմբեր	2018 թ.		Բ	1284329954
[4] Առաքման ամսաթիվ					
6	Սեպտեմբեր	2018 թ.		Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)		

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՑԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՄԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[10] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ Վ.ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի	
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[16] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[18] Լրացուցիչ տվյալներ	
[19] Ռում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Լիազորագիր: Ամսաթիվ
[20] Մատակարարման (առաքման) եղանակը	
[21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 39151218 բ/գ,	հատ	1	39400	39400
Ընդամենը					39400

Առաքող՝ KALANTARYAN GAYANE
7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող՝
(անունը, ազգանունը)

06/09/2018 13:02:54

ՈՐՈՇՈՒՄ

ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

ք.Տաշիր

04 ապրիլի, 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպեփանավանի քննչական բաժնի քննիչ, արադարադատության ավագ լեյտենանտ՝ Ֆ.Գ. Նազարյանս, վերանայելով վարույթիս թիվ 39151218 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Լոռու մարզի Մեծավան գյուղի բնակիչ Վլադիմիր Պետրոսյանի հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով առերևույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ սույն թվականի հունվարի 27-ին, ժամը 10-ի սահմաններում իր մայրը՝ Ֆենիկ Պետրոսյանը, նույն գյուղի Կոմիտասի փողոցի 9-րդ հասցեում գտնվող իրենց առանձնատան միջանցքում կենցաղային հարցի շուրջ վիճաբանել է իր հետ, որի ընթացքում ոտքերով և ձեռնափայտով 4-5 անգամ հարվածներ է հասցրել իր մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Բացի այդ, նույն օրը, Ֆենիկ Պետրոսյանը ոստիկանության Տաշիրի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ սույն թվականի հունվարի 27-ին, ժամը 10-ի սահմաններում Լոռու մարզի Մեծավան գյուղի Կոմիտասի փողոցի 9-րդ հասցեում գտնվող իրենց առանձնատանը որդին՝ Վլադիմիր Պետրոսյանը կենցաղային հարցի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել դեմքի և մարմնի տարբեր հատվածներում՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Նշանակված դատաբժշկական փորձաքննության թիվ 0040/ա եզրակացությամբ Ֆենիկ Պետրոսյանի ստացած մարմնական վնասվածքները՝ քթի մեջքի, զույգ աչքերի ստորին կոպերի, ձախ այտային, ձախ ազդրի շրջանների արյունազեղումների, զույգ նախաբազուկների շրջանների քերծվածքների, ձախից քթոսկրի առանց տեղաշարժի կոտրվածքի ձևով, պատճառվել են բութ կոշտ առարկաների ներգործությամբ, հնարավոր է փորձաքննվողի կողմից նշված ժամկետին և հանգամանքներում, պատճառվել է առողջությանը թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, նկատի ունենալով վնասվածքների հետ անմիջական պատճառական կապի մեջ գտնվող հետևանքների տևողությունը ոչ պակաս վեց օրից և ոչ ավելի քսանմեկ օրից:

Նշանակված դատաբժշկական փորձաքննության թիվ 0041/ա եզրակացությամբ Վլադիմիր Պետրոսյանի ստացած մարմնական վնասվածքը՝ աջ ոտնաթաթի շրջանի քերծվածքի ձևով, պատճառվել է բութ կոշտ առարկայի ներգործությամբ, հնարավոր է նշված ժամկետին և հանգամանքներում, որն առողջության թեթև վնասի հատկանիշներ չի պարունակում:

Վլադիմիր Պետրոսյանը իր լրացուցիչ բացատրությամբ հայտնել է, որ Ֆենիկ Պետրոսյանի նկատմամբ բողոք չունի, սակայն չի ընդունել իր կողմից կատարված արարքները:

2018 թվականի փետրվարի 06-ին Ֆենիկ Պետրոսյանը վարույթն իրականացնող մարմնին դիմում է ներկայացրել այն մասին, որ Վլադիմիր Օտտոյի Պետրոսյանի նկատմամբ բողոք ունի և ցանկանում է, որ նա ենթարկվի քրեական պատասխանատվության:

Դեպքերի առթիվ ոստիկանության Տաշիրի բաժնում 2018 թվականի փետրվարի 16-ին ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ և 118-րդ հոդվածներով հարուցվել է քրեական գործ:

2018 թվականի փետրվարի 16-ին սույն քրեական գործն ըստ ենթակայության ուղարկվել և նույն թվականի փետրվարի 19-ին մուտքագրվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնում:

2018 թվականի մարտի 01-ին Վլադիմիր Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է ստերագրություն չհեռանալու մասին:

Քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների համակցությամբ 2018 թվականի մարտի 08-ին Վլադիմիր Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով այն բանի համար, որ նա 2018 թվականի հունվարի 27-ին՝ ժամը 10-ի սահմաններում, կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում Լոռու մարզի Մեծավան գյուղի Կոմիտասի փողոցի 9-րդ հասցեում գտնվող առանձնատան միջանցքում բռունցքներով, ոտքով և գլխով դիտավորությամբ հարվածներ է հասցրել մոր՝ Ֆենիկ Պետրոսյանի դեմքին և մարմնի տարբեր հատվածներին՝ նրա առողջությանը դիտավորությամբ պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով՝ քթի մեջքի, զույգ աչքերի ստորին կոպերի, ձախ այտային, ձախ ազդրի շրջանների արյունազեղումների, զույգ նախաբազուկների շրջանների քերծվածքների, ձախից քթոսկրի առանց տեղաշարժի կոտրվածքի ձևով:

Վլադիմիր Պետրոսյանը 2016 թվականի մարտի 24-ից հաշվառված է եղել ՀՀ ԱՆ «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում «Ալկոհոլի գործածման հետևանքով վարքի խանգարումներ» ախտորոշմամբ:

2017 թվականի հուլիսի 24-ին բնակության վայրը փոխելու կապակցությամբ հանվել է հաշվառումից:

Գործով անհրաժեշտ է պարզել Վլադիմիր Պետրոսյանի հոգեկան վիճակը՝ հանցագործությունները կատարելու պահին, արդյոք նա տառապել և տառապում է հոգեկան հիվանդությամբ, իր գործողությունների բնույթը գիտակցել է, թե ոչ, ալկոհոլամոլությամբ տառապելու հանգամանքը: Այս և այլ հարցեր պարզելու համար պահանջվում են դատական հոգեբուժության և դատական թմրաբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ, 244, 248-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել **ՀՀ <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՓԲ ընկերության փորձագետներին:**

Փորձաքննության ներկայացնել սույն որոշման օրինակը և մեղադրյալ Վլադիմիր Պետրոսյանին:

Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը:

ա) Մեղադրյալ Վլադիմիր Պետրոսյանը իրեն մեղսագրվող արարքը կատարելուց առաջ, կատարելու պահին և դրանից հետո որևէ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո՞, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ, երբվանի՞ց, այդ հիվանդությունը կրե՞լ է քրոնիկ բնույթ, թե՞ ոչ, վերջինիս մոտ տկարամտություն կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակ եղե՞լ է, թե՞

ոչ և արդյո՞ք նա կարող էր գիտակցել իր գործողության վտանգավորությունը և կարող էր արդյո՞ք ղեկավարել այդ գործողությունը, թե՞ ոչ:

բ) Եթե Վլադիմիր Պետրոսյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տկարամտությամբ կամ առկա է հոգեկան այլ հիվանդագին վիճակ, ապա կարող էր արդյո՞ք մեղսագրվող արարքը կատարելու պահին այդ հիվանդությունը զրկել նրան իր գործողությունների փաստական հանգամանքները և սոցիալական նշանակությունը՝ հանրային վտանգավորությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակությունից, թե՞ ոչ, արարքը կատարելիս Խաչատուր Դավթյանը գիտակցել է արդյո՞ք իր արարքի փաստական հանգամանքները և սոցիալական նշանակությունը՝ հանրային վտանգավորությունը և ունակ է եղել արդյո՞ք ղեկավարել իր գործողությունները, թե՞ ոչ:

գ) Վլադիմիր Պետրոսյանը իրեն մեղսագրվող արարքը կատարելու պահին գտնվել է արդյո՞ք պաթոլոգիական աֆեկտի վիճակում, թե՞ ոչ:

դ) Մեղադրյալ Վլադիմիր Պետրոսյանը մեղսունա՞կ է, թե՞ սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ:

ե) Եթե մեղադրյալ Վլադիմիր Պետրոսյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տկարամտությամբ կամ առկա է հոգեկան այլ հիվանդագին վիճակ, ապա նա բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո՞, ապա ի՞նչ տեսակի:

զ) Եթե մեղադրյալ Վլադիմիր Պետրոսյանը հարկադիր բուժման կարիք ունի, ապա այդ կապակցությամբ կա՞ն, արդյոք, բուժման համար հակացուցումներ:

է) Հաշվի առնելով մեղադրյալ Վլադիմիր Պետրոսյանի հոգեվիճակը և նրա մոտ առկա հիվանդությունը կարող էր արդյո՞ք նա ճիշտ ընկալել գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքները և վերարտադրել դրանք, թե՞ ոչ, հաշտվել գործով տուժողի հետ, թե՞ ոչ :

Փորձագետներին իրավունք վերապահել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշմամբ առաջադրված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, առանց քննիչի թույլտվության նախնական քննության փվալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝ **Ֆ.Գ. Նազարյան**